

Մեծ հմուտ թանաքագիտ Գրուսն է ամբողջ գործը, թեև Ալեքսանդրն կը նշմարուի նիւթի ոչ լաւ մշակում, որ արգիւնքն է աւանց տալակուսի հեղինակին վաղահաս մահուան: Կը կորդացուի անշափ հետաքրքրութեամբ եւ օգտուի: Հայերէնագէտ հեղինակն ջանացած է ամէն դէպքին ի նկատի ունենալ նաեւ հայկական աղբիւրներն եւ շեշտել Հայոց խաղացած դերը լիւ զանգական քաղաքակրթութեան մէջ (հմտ. էջ 76—81 եւ այլուր):

Կը յանձնէր շահեկան գրուածքս հայ պատմաէրենբուս ուշագրութեան:

Հ. Ն. ԱՅԻՆՈՒՆ



ՍՄԱՐՏ ՌԻԻՐԱՏ. — Բանտէ բանտ, պատմական վէպ 5 տրք. էջ 1048. Կ. Պոլիս, 1910. զին՝ 30 իրք.:

Մանգո-ձէ խափանմամբ կիսաւարտ ճիւղած Բանտէ Բանտ պատմական վէպն վերջերս առանձին հրատարակուեցաւ շափաւոր եւ գիւրմառաշէի գնով մը: Վէպին նիւթն ամէն Հայու սրտին մօտիկ Զէյթունի հերոսական կենսաբան առնուած է. զիստաւոր դերակատարն է Զէյթունիցի զարգացեալ եւ համակրելի Երէւանացի մը, որ տարիներով բանտէ բանտ թափառելէն եւ անպատու մտաւապանաց դիմանալէն ետքն, իւր խիղախ եւ աննկուն նկարագրով կը յաջողի վերջապէս բանապետութեան ճիւղաներէն ճողալով: Վէպը հաւատարիմ է ճշգրիտ պատկերն է համարեան շրջանին մէջ Հայոց համար դժուր գործած Ցածկատաշին, եւ Մեծ մարդասպանին զոհերուն կրած տառապանքներ: Թարգմ. Հեղինակը կենդանի գոյներով կը նկարագրէ հազկատակ եւ անխիղճ թուրք պաշտօնեաներուն՝ իրենց անյատակ քաւիւր լեցըներուն համար, անմեղներու դէմ գործածած սադայելական հնարքներն, պալատական սուրբաբար սինյոքորներու վռհմակին՝ իրենց Հայու արեան ծառայի վեհապետին հովանաւորութեանը տակ գործած անիրաւութիւններն ու ոճիրները. եւ կենդանի կերպով դուրս կը ցայտեցնէ անոնց վատ հոգւոյն բոլոր ստորնութիւններն: Ասանց կարգէն դասական նոյններն են, զոր օրինակ՝ Հայկազի կուսակալ Արիֆ փաշան, Մարաշի կառավարիչ փաշան Սալիհն եւ իւր արքանեակն Գաւրի: Զէյթունի գայմազանն. որոնք Երբողի հայաշաւած քաղաքականութեան մէջ մէկ հըւ գործընդեր են, ի հարկէ իրենց անձնական շահուն համար: Բայց կան նոյն շրջանի թուրք պաշտօնեայ մէջ ալ զարուստ դարձող պարսկերէն եւ արաբական ունենաւորութիւնը, մանաւանդ զինուորական դասակարգէն, օրինակի աղագաւ՝ Լիվա-փաշա Մուհամմադ Ալին եւ նմաններն. սակայն ասոնց բոլոր ճիգերն ի գեւրէն կ'ենլին Երբողի կամայական եւ կրօնաւարար հրամաններուն առկա: Հոս ալ չեն չեն պակսիր գծաթաւարար ներքին թշնամիք, որոնք միշտ

անհամեմատ աւելի աղետաբեր եղած են Հայուն՝ քան վայրագ պլազգին. այսպէս են՝ Արիֆին սեւհոգի խորհրդական Թալիֆ Իւլի եւ Զէյթունիցի քարձմորուք Տէր Կարապետ, որոնք իրենց մատնութիւններով ու սարգաքներով անակից կը հանգիստանան իրենց ազգակցաց գահաձեռներուն: Մեկ խօսքով ամբողջ վէպն հետաքրքրական եւ թեկադրիչ է, կ'արժէ որ ամէն Հայ կարգիւր եւ վերստին որոճայ իւր մօտաւոր անցեալին ողբալի պատկերն՝ եւ ապագային համար գաս առնութեան կեղծ խոստումներուն միամտաբար չհաւատալու, եւ վերապահ չողուաւոր դիրք մը բռնելու: Ինչպէս որ վերջին իրիկեան կոտորածն ու աւերը եւ ի գործ դրուած ողորդութիւնը գծաթաւարար կը հաստատեն մեր խօսքը:

Հ. Պ. Ջ.



Mgr. J. B. ASGIAN. — Kosrovitouthe, La Vierge de l'Ararat ou l'Eglise naissante de l'Ararat. Constantinople, Ed. F. Loefler, Péra, Place du Tunnel. 1909. 8° pp. 332.

Հեղինակն իւր նիւթը կը ժողովէ Արշակունեաց հարստութեան ութսուն տարուան ժամանակաշրջանէն (250—330), բւել կ'ըլլայ այն զարէն, յորում կրօնական, նիւթական եւ քաղաքական զարգացման սերմերն ինկան հայ հոգին վրայ:

Գրքին նպատակն է ծանօթացնել Հայութեան համակր եւրոպացիներու անոր փառաւոր անցեալը՝ կենդանի վէպի մը տարազով լաւ զարգացուած մտքով մը մէջ: Արգարեւ գեղեցիկ ձգտում: Այնու որ Մեծ. հեղինակն ընթերցողները զուարճացնել եւ հրահանգել միանգամայն ուզած է իր այս ձեռնարկութեամբ, ջանացած է հետեւաբար ճոխացնել զայն ուշագրաւ դէմքերու արդէն ծանօթ պատկերներով, միայն այս տարբերութեամբ որ պատմական անձնաւորութիւններու հրապարակաւ ծանօթ պատկերներն երբեմն իրարու հետ կը փոխանակուին: Վէպին մէջ հերոսի գերը կը կատարէ Խոսրովդուխտ. այն գերը կը կերպաւորուի ի մանաւորի իր եղբոր Տրդատայ եւ Գրիգոր Լուսաւորչի գործած քաղաքականութեամբ. ահա այս երեք թագապատկերները կը համընթանան հիւսելու Հայաստանի քրիստոնէութեան դարձի պատմութիւնը: Վէպին աւելի ձեւ մը տալու համար հնարագէտ հեղինակը, ինչպէս բնական է՝ պատշաճ դատած է երբեմն նոր գործիչով կամ պարագայով մը պատմական թեւրին լրացնել: